

[ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ]

[ՀԱՏՈՒԱԾ]

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԸ

ԹԱՆԷՐ ԱԳՉԱՄ

[էջ 95] Անշուշտ [այս բոլորին վրան] կրնանք ակեցնել թուրք ազգային ինքնութեան առնչուող յատկանիշերը⁽¹⁾, սակայն վերը գծուած տախտակէն, զոր անհրաժեշտ է տեսնել, ի յայտ կու գայ, որ հայկական ջարդերը վերին աստիճանի բացայայտիչ դեր կը խաղան: Հաւաքական եւ հոգեկան առկայութեան մէջ, որուն վերիվարոյ կը փորձուի գծել շրջագիծը, թուրք ազգային ինքնութիւնը կը ներկայացնէր յետագոյնը փոքրամասնական հաւաքականութիւններուն եւ որպէս այդպիսին՝ հակամէտ մնաց տեսնուելու պատճառը դէպքերու, եւ տեսնուեցաւ այդպիսին՝ ալ: Ըլլալով վերջինը մեծ փոքրամասնութիւններուն հայերը հատուցին հաշիւը [Օսմանեան] Կայսրութենէն բաժնուող իրարայաջորդ քրիստոնեայ փոքրամասնութիւններուն, որովհետեւ հայերն ալ սկսան ռազմավարութեան մը անոնց նման՝ սակայն քչիկ մը յամեցած: Անոնք ուզեցին ուշադրութիւնը գրաւելով օտար պետութիւններուն՝ ապահովել անոնց միջամտութիւնը եւ այդ ձեւով ապահովել կարգ մը իրաւունքներ: Այս մէկը յայտնի է օսմանեան արխիւներէն: Աւելին, ըստ կարի, այս քաղաքականութեան գինը եղած էր բարձր՝ մանաւանդ Պալքաններուն մէջ: Կորսուած հողերը, հարիւր հազարաւոր զաղթականները [էջ 96], մահմետականներուն ջարդը, Արեւմուտքէն ծեծ ուսող տղու մը իր⁽²⁾ վերածումը, եւայլն, ... ահա՛ւասիկ այն պատճառները որոնք ստիպեցին թուրք իշխանու-

թիւները որ չըլլային նոյն շարժապատկերը սկիզբէն վերստին դիտող մը եւ ճգմէին հայերուն գլուխը անոր աւելի բարձրանալէն⁽³⁾ առաջ:

Օսմանցիներու մօտ կայ երկար պատմութիւն մը հայկական ջարդերու: Կարեւոր է ջարդերը բաժնել անջատ շրջաններու՝ ըստ ձեւի եւ գործադրութեան: Կարգ մը հայ պատմարաններ կը խօսին հինգ անջատ շրջաններու մասին: Առաջին շրջանը կ'ընդգրկէ 1890-1909-ի միջեւ ինկոզ ժամանակը՝ երկրորդը 1915-[19]17-ի միջոցն է՝ իսկ միւս շրջաններն ալ կը սկսին 1918-ի աւարտով⁽⁴⁾:

Հայ ժողովուրդի ջարդերուն առաջնորդող կայ կազմաւորումի շրջան մը: Առաջին շրջանի ջարդերը կը գանուին Օսմանեան Կայսրութեան իշխանութեան ներքեւ ապրող կրօնական եւ ազգային զանազան հաւաքականութիւնները կանոնաւոր կերպով ճնշելու քաղաքականութեան շրջագիծէն ներս եւ ունին աւելի տեղական բնոյթ⁽⁵⁾: Անիկա մասնաշատուկ չէ լոկ մէկ իշխանութեան: Հետեւեալներն են [ճնշումի] տեսնուած ձեւերը.

ա) Քիւրտ եւ մահմետական ցեղախումբերուն խժոժութեամբ յարձակումը հայ-քրիստոնեայ գիւղերուն վրայ, այս յարձակումներու ընթացքին յափշտակումը գիւղացիներու ինչքերուն, առեւանգումը անոնց աղջիկներուն, [եւ] զանազան արարքներ հաւաքական սպանդներու:

բ) Մահմետական-հայ բախումներ ներքին պատերազմի ձեւով, եւ անոնց ընթացքին կատարուած ջարդերը:

գ) Այն ջարդերը զորոնք պետական ուժերը կը կազմակերպեն հարկերը հաւաքելու, հրոսակները հալածելու կամ հայկական ըմբոստութիւնները եւ «անհանդարտութիւնները» ճգմելու համար եւ այլ պատճառներով:

Կը տեսնենք որ այս ջարդերը շատ աւելի կանոնաւոր նկարագիր կը զգենուն մանաւանդ երբ 1890-ին կը կազմակերպուին Համիտիէ Գունդերը: Պետութեան ենթակայ այս ցեղախումբերէն կազմուած հաւաքականութիւններուն բոլոր ծախսերը կ'ապահովէին անոնց կատարած ճնշումներէն, աւազակութիւններէն եւ ջարդերէն ձեռք անցուած եկամուտներով:

Մեր առաջին շրջան կոչած ժամանակաշրջանին մէջ կատարուած ջարդերուն մեծագոյնը տեղի ունեցաւ 1894-[18]96 տարիներուն: Այս ջարդերու զոհերուն ընդհանուր թիւին շուրջ կը տրուին փոփոխական թիւեր: Անգլիական եւ ֆրանսական հիւպատոսական [էջ 97] տեղեկագիրներունը 50,000 է, մինչ Լեփսիուս կը խօսի 80,000-100,000 մահի մասին⁽⁶⁾:

Ազգային այլ փոքրամասնութիւններու ջարդերուն [հետ
բաղդատած]՝ կարելի է ըսել թէ Հայկականները կը ստանան աւելի
տարբեր նկարագիր մը մանաւանդ 1890-ական թուականներէն
ետք: Ընդհանուր ակնարկով մը՝ անոնք պայքարներն էին Օս-
մանեան Կայսրութենէն անջատուիլ ուզող ժողովուրդի մը ճիգը
բունութեամբ ճշմելու կամ մահամտական-քրիստոնեայ բախումի
մը մէջ ապրող եւ ի վերջոյ իրարու հակադրուելու միտող ջարդե-
րուն: Հայկական ջարդերուն մէջ կը տեսնուի թէ օսմանեան իշխա-
նութեան համխալածական գաղափարաբանութեամբ իր ինքնութիւ-
նը ապահովելու համար հետզհետէ յառաջացող իսլամական մոթի-
ֆը, [նոյն ատեն] կը սկսի հայերուն որպէս հաւաքականութիւն
ընդհանրական նուաստացումը: Իր կողմէն այլ խմբաւորումի մը
նուաստացումն ու քամահրումը բացորոշ կերպով կը տեսնուին
Հայկական Հարցին մէջ եւ ծնունդ կու տան ազգային ստորոգումի
մը հայերու մասին⁽⁷⁾:

Օրինակի համար՝ կրկնելէ ետք թէ չափազանց հարուստ են
հայերը, կը կազմեն մէկ երրորդը օսմանեան պաշտօնէութեան,
քիչ տուրք կը հատուցեն [եւ] զինուորական ծառայութիւն չեն կա-
տարեր՝ Ապտիւլ Համիտ կ'ըսէ [տակաւին, թէ] «հայերը այլասե-
րած հաւաքականութիւն մըն են... հայերը տեւական մանկութիւնն
են»⁽⁸⁾: Ապտիւլ Համիտ որ կ'ըսէ թէ հայերու լաւ տուեալները յա-
ռաջացած են անոնց տնտեսական ուժէն՝ այս ուժը քանդելու հա-
մար է որ կը ծրագրէ ծանր ճնշումի քաղաքականութիւն մը. առ
այդ՝ հարուածելու համար հայ քաղքենիութիւնը՝ կ'որդեգրէ ու-
րոշումներ եւ բիրտ զսպումի եւ հսկողութեան տակ անոնք կու տայ
հայ առեւտրականները, սակարանի մէջ աշխատողները եւ անոնց
նմանները՝ բոլոր նահանգներուն առաքուած հրահանգով մը⁽⁹⁾:

Նոյն ատեն, Ապտիւլ Համիտի խօսքով, այս շրջանն ա՛յն է
երբ [Օսմանեան] Կայսրութիւնը «քրիստոնեայ աշխարհի թշնա-
մական տեւական յարձակումներուն» հետ զէմ առ զէմ գտնուելով՝
դժուարութեամբ կը պահէ ինքզինք⁽¹⁰⁾: Մենք բոլորուած ենք մեզ
բաժան-բաժան ընել եւ բզկտել ուզող թշնամիներով, եւ վիճակը
հետզհետէ կը հասնի ճակատագրական դրութեան մը: Հոգեկան
[էջ 98] կացութիւնը լաւագոյնս կը բացատրուի Ապտիւլ Համիտի
բառերով: Սուլթանը կ'ըսէ թէ «Յունաստանի եւ Ռումանիոյ խլուե-
լով՝ Եւրոպան կտրեց թուրք պետութեան ոտքերը: Պուլկարիոյ,
Սերպիոյ եւ Եգիպտոսի կորուստը մեզմէ տարաւ մեր ձեռքերը,
եւ հիմա հայերու [մասին կատարուած] քարոզչութեամբ՝ անոնք
կ'ուզեն մօտենալ կեանքի մեր ակին ու ազբիւրին, [եւ] նոյնիսկ

փրցնել մեր աղիքները: Այս բոլորէն ի յայտ կու գայ, որ սկսած է [մեր] չքացումը, որուն դէմ ստիպուած ենք մենք գմեզ պաշտպանել մեր բոլոր ուժովը»⁽¹¹⁾:

Գերման ազատական Նաուման լուսագոյնս կը բացատրէ 1894- [18]96 տարիներու հակահայ ջարդերու թրքական այս ողին: Թուրքերուն կողմէ հայերուն սպանդը քրիստոնեայի պարզ հալածանք մը չէ լոկ, այլ հին մեծ կայսրութեան մը իր մահուան գուպարին մէջ ինքզինք փրկելու համար կատարած ճիգին մէկ մասն է անիկա⁽¹²⁾:

Այս պատճառով երբեք ալ դժուար չէ հաստատել զրական այն կարծիքը թէ հայերը մէկ երկարաձգումն են մեզ շրջապատող թշնամիներուն եւ կ'ուզեն խլել մեր ձեռքը գտնուող հողի վերջին պատարը: Հայկական Հարցը սկսաւ դիտուիլ [Օսմանեան] Կայսրութեան լինելու եւ չլինելու հարցը որպէս: Տեւօրէն ցրուումի եւ քղկտումի մէջ գոյութիւն ունենալու հոգեբանութեան հետ մեր շրջապատուած բլլալու համոզումը ուժ տուին այն զաղափարին, թէ պէտք է համախմբել կայսրութեան գո'նէ մահմետական ժողովուրդը: Այս շրջանին է որ համխալամութիւնը կը վերածուի պետական քաղաքականութեան:

Այսպէսով վկան կը դառնանք հայ ժողովուրդին դէմ կեդրոնէն ծրագրուած [եւ] ժողովրդասպանութեան⁽¹³⁾ նմանող յարձակումներու, որոնք տարբեր են այլ ժողովուրդներու դէմ կատարուող ճնշումներէն: Կեդրոնական կառավարութիւնը իմաստ մը կու տայ⁽¹⁴⁾ նուազագոյն դէպքին իսկ: Հայերուն դէմ [գործադրուող] յարձակումներն ու ջարդերը կ'օգտագործուին մահմետական ժողովուրդն օսմանեան իշխանութեան աւելի եւս պինդ կապելու համար: Գրող մը որ կը քննէ միայն երակները Ապտիւլ Համիտի իսլամական սկզբունքները հիմ ընդունած քաղաքականութեան՝ այս առնչութեամբ կու տայ յատկանշական սա միտքերը: [էջ 99] «... Իր շուրջ հաւաքեց շատ մը խելացիներ այլազան ժողովուրդներէն: Մահմետականներն աւելցուց քրիստոնեայ պաշտօնատարներուն թիւը նուազեցնելով...: Մահմետական խրմբաւորումները զինելով եւրոպացիներուն զինած քրիստոնեայ համայնքներուն դէմ՝ ճանչցաւ անոնց յարձակելու իրաւունքը եւ ստեղծեց այն կարծիքը թէ պետութիւնը կողմնակից է անոնց⁽¹⁵⁾: Ինչպէս անցեալին՝ չպատժեց մահմետականները՝ որովհետեւ Եւրոպա կ'ուզէր: Իսկ եթէ պատժեց՝ սահմանեց զանցառելի կոչուելիք պատիժներ»⁽¹⁶⁾: Ինչպէս կը տեսնուի՝ զինելով մահմետական

ժողովուրդը՝ Ապտիւ Համիտ յարձակումի կը զրկէ զայն Հայ ժողովուրդին դէմ ի՛ր իսկ ստեղծած այլազան պատճառներով, [եւ] գրողին ըսածին պէս՝ յետագային ջարդերու մասնակիցներուն տրուած պատիժներն ալ ունին զանցառելի ծանրութիւն մը:

Կրկին՝ ա՛յս շրջանին է, որ կը բարձրանան այն ձայները որոնք Հայկական Հարցին լուծումը կը տեսնեն ժողովուրդի մը ամբողջական անէացումին մէջ: Ինչպէս օսմանցիին բարեկամ հունգար արեւելագէտ Վամպերին կ'ըսէ՝ «Իզգէթ փաշան որ կը բացատրէ Ապտիւ Համիտի հայկական քաղաքականութիւնը՝ Հայկական Հարցին հրապարակէն չքացումին ուղին կը գտնէ հայերուն հրապարակէն վերցուելուն մէջ»⁽¹⁷⁾:

Ինչպէս վերը ըսինք՝ մինչեւ 1915 հայկական ջարդերն ըլլալով հանդերձ կեդրոնական քաղաքականութեան արտայայտութիւն՝ ունին «տեղական» բնոյթ, սակայն 1915- [19] 17-ի միջոցին կատարուածները էսպէս տարբեր են զիրենք նախորդողներէն: Անոնք ցեղասպանութիւն են: Տրուած է Հայկական Հարցը հիմնովին լուծելու որոշումը: Այն հարցումը որուն պատասխանը պէտք է փնտռել հոս՝ կը մնայ «հիմնական լուծում»ի որոշումին ճամբայ հարթող ազդակներուն ի՞նչ բան ըլլալը:

Անշուշտ այս պատճառներուն զուխը կը կենայ Համաշխարհային Առաջին Պատերազմին ստեղծած «մահասփիւռ կացութիւնը»: Իրաւ ալ՝ մեծ պատերազմները վերին աստիճանի օգտակար միջոցներ կը ստեղծեն այսպիսի ընդհանուր ջարդերու համար: Համաշխարհային Երկրորդ Պատերազմը նման դեր մը պիտի խաղար հրէական ջարդին մէջ: Սակայն հոս անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել կարեւոր կէտի մը: Հրեաներուն որպէս ցեղ ամբողջական կերպով հրապարակէն [էջ 100] չքացումը հիմնական կէտերէն մէկն է նացիներու ծրագիրին: Այս փափաքը գոյութիւն է ունեցեր տեւական կերպով եւ զրական ընծայուելու կարելիութիւնը գտած՝ պատերազմի յարձակումներուն ընթացքին:

Դժուար է, [սակայն], օսմանցիներուն մօտ գտնել հայ ցեղն ամբողջութեամբ բնաջնջելու ցեղասպանական ծրագիր մը, որ յենած ըլլայ իսլամութեան վրայ եւ խօսի «ցեղապաշտութենէ»: Նոյնիսկ պատերազմի առաջին ամիսներուն, հակառակ հայերուն հանդէպ կատարուող բարբարոս գործունէութեան, «կայ ոչ մէկ նշան . . . իթիհհատ վէթերագգը կուսակցութեան կողմէ [Օսմանեան] Կայսրութեան հայերը բնաջնջելու որոշումի մը մասին»⁽¹⁸⁾: Հարցը ուսումնասիրողներն ալ այն կարծիքէն⁽¹⁹⁾ են որ այս որոշումը տրուած է Փետրուարի վերջերուն՝ [կամ] Մարտի սկիզբնե-

րուն: Ահա թէ ինչո՞ւ համար կարեւորութիւն կը զգենու օսման-
ցիներուն այս ուղղութեամբ որոշումի մը յանգելու ստիպող ազ-
դակներուն ի՞նչ բաներ ըլլալու խնդիրը:

[Այսպէս ընել կարենալու համար] անշո՛ւշտ որ շարժելու
է թուրք ազգային ինքնութեան ընդհանուր յատկանիշերը ցոյց
տուող հոգի վրայ: Սակայն այս հոգն այնպիսի կէտի մը հասած ըլ-
լալու է, որ մինչեւ այդ օր «մաս առ մաս» լուծուելուն հաւատ ըն-
ծայուած այս հարցին «արմատական լուծումը» անխուսափելի
կերպով պարտադրէ ինքզինք: Սակայն յստակ է որ այս ալ մէկ
արտայայտութիւնն է առկայ քայքայումին եւ բզկտումին տեւա-
կանացումին մէջ մեծ եւ փառաւոր անցեալը վերահաստատելու
իտէալին: Սակայն ձեւով մը անիկա ուղղակի կ'առընչուի անոր
մերժումին:

Կրկին, հակառակ վտանգաւոր ըլլալուն անոր, անհրաժեշտ
է Հայկական Հարցին մէջ քշիկ մը աւելի բանալ այս կէտը: Որո՞վ-
հետեւ օսմանեան-թուրք ղեկավարներուն որոնց վարկին հետ էր
խաղացեր եւ զայն նուաստացուցեր Ընդհանուր Առաջին Պատե-
րազմը՝ [այդ վերջինը] թուեցաւ ըլլալ պատմական առիթ մը հին
օրերուն վերադառնալու համար, սակայն շուտով չքացաւ այս
երազր եւ անոր փոխան զօրաւոր կերպով տեղ դրաւեց սարսափ մը
ոչնչացումի [եւ] անէացումի: Այս իրողութիւնն անջնջելի հետք
մը ձգեց հայկական ջարդերուն վրայ:

Ինչպէս ըսինք նախապէս՝ «մեծ եւ փառաւոր» անցեալ մը
ունեցող ժողովուրդներ կ'ապրին ստուերին եւ ճնշումին ներքեւ
այս անցեալին գերիշխանութեան: Իսկ երբ այս ժողովուրդները
[էջ 101] գտնուին տկար կացութեան մը մէջ՝ կը նուաստանան երբ
խաղցուի իրենց վարկին հետ, իսկ եթէ իրենք զիրենք գանձն
անէացումի հոգեբանութեան մէջ՝ աւելի՛ եւս կը ծանրանայ անց-
եալի այս ճնշումը: Անցեալի պայծառութեան եւ այսօրուան ար-
ժեգրկումին եւ նուաստացումին միջեւ գտնուող խորխորատին
մեծութեան այլ մէկ նպատակն է ընդհանրական նպատակի մը վե-
րածումը այս «փառաւոր անցեալին»: Որքան որ դժուար է զգա-
ցումը տկարութեան, արժեգրկումին եւ նուաստացումին՝ նոյն-
քան ալ դժուար է իտէալականացումը անցեալին:

Այս պատկերացումն ուղղակի առընչութիւն ունի հաւաքա-
կանութենէն ներս բրտութեան յառաջացումին հետ: Որքա՛ն որ սրի
փառաւոր անցեալին իտէալականացումը վաղէն ներս՝ այդքա՛ն
կ'աւելնայ բրտութեան կարելիութիւնը: «Երկար շրջան մը իր
պարտութիւններէն եւ անոնց յաջորդող ամենամեայ կորուստնե-
րէն վնասուած գերմանը [այս մէկը կրնանք կարգալ նաեւ որպէս

օսմանեան թուրք] իր պատմութեան վրայ դիզուած արարքները եւ այս պատճառով պարտութեան մատնուած ազգային իր վարկը յառաջացուցին ինքնավստահութիւնը կորսնցուցած ազգային ինքնութեան մը, որ իր մեծ անցեալին երազը կրեց իրեն հետ որպէս գալիքի նպատակ եւ հրապարակ դրաւ անցեալէն եկող ազգային երազ մը: Այս մէկը դիւրացուց յառաջացումը ծայրայեղ կերպով վատ գործունէութեան մը եւ [անոր] գաղափարին»⁽²⁰⁾:

Եթէ շրջա՛յ իսկ ընդհանուր քայքայում մը՝ ուժի եւ կարողականութեան կորուստը, վարկարեկումը եւ արժանապատուութեան անհետացումը հրապարակ կը քաշեն բռնութիւն օգտագործելու տենչ մը՝ զանոնք իրմէ կորզողներուն դէմ: Անկումի եւ նրւաստացումի այս զգացումին զուգահեռ՝ տարողնուելու եւ բզրկատուելու տեւականացումին զօրացումը, «բնաջնջումի» եւ «պատին դէմ գալով կենաց եւ մահու պայքարը» ուղի կը հարթեն սարսափի զգացումներուն հզօրացումին: Առկայ կացութեան տակաւ յուսահատութեան փոխակերպումը աւելի եւս կը մեծցնէ յարձակողականութիւնն անոնց որոնք արգելք չեն կրնար հանդիսանալ անկումին: Վտանգուածութիւնը մեծ եւ իտէալական ապագայի մը իրականութեան վերածուելուն եւ անկարողութիւնը անկումը կասեցնելուն՝ աւելի՛ եւս վայրագ նկարագիր մը կու տան այս կացութեան արգիլումին համար տարուող միջոցառումներու որոնումին: Ամբողջական կոտորածը գազաթնակէտն է այս կացութեան:

[էջ 102] Եթէ նոյնիսկ այս անկումին տեւականացումը ցոյց չի տար տեսանելի որեւէ բան [եւ] անկէ դուրս գալու յոյսերը մերթկու գան ու կ'երթան՝ անոր աւարտը կ'ընծայուի աւելի՛ եւս ողբերգական. որո՛վհետեւ ինքզինք բնաջնջուելու վրան զգացող ժողովուրդը ի՛սկապէս չ'ընդունիր իր հասած ըլլալը յատակն իր անկումին՝ առ այդ՝ աւելի եւս կուրօրէն կը կապուի մեծ գալիքին՝ որքան որ անկարելի կ'ընծայուի իրագործումն անոր: Կարճ ասած՝ «անկումին կարելիութեան ուժգնութիւնը զինք կը մօտեցնէ այդ անկումը կասեցնելու համար օգտագործուելիք միջոցառումներու բրտութեան...»: Կոնակը պատին գալը քաղաքակրթութեան մեծ պաշտպանները կ'ընծայէ մեծագոյն քանդողներն անոր, [եւ անոնք] դիւրաւ կը դառնան վայրագ»⁽²¹⁾:

Այս է օսմանցիներուն ապրած կացութիւնն ալ: Համաթուրանականութիւնը, թրքական մեծ կայսրութեան մը իտէալը [եւ] տակաւ յաւելումը տարողնումին եւ բզրկտումին՝ բարդացուցեր են կացութիւնը զանոնք անյուսութեան մատնելով: [Օսմանեան] Կայսրութիւնը համախումբ պահելիք հաւաքական ինքնութեան մը

որոնումը դարձած է ոչ-յուսալի [եւ] աչքերն աւելի եւս դարձեր են արեւելք՝ մեծ կայսրութեան մը իտէալը կարելի ընծայող այլ հողերուն եւ ժողովուրդներուն: Համաշխարհային Առաջին Պատերազմը պատմական առիթ մըն է թուրքերուն համար, որոնք տեւական պարտութեան, նուաստացումի, վարկաբեկումի եւ ողբերգական անկումի մը գոյութեան հաւատացողներու տարտղնումին տեւականացումին վերջ մը տալու առիթը գտածի պէս են [հիմա]: Կարելի է փոխել թուրքին գլխիվայր շրջած պատմութիւնը: Կրնայ կասեցուիլ անկումը: Թրքական Մեծ Կայսրութիւնը կրնայ հիմնուիլ նոր ի նորոյ, սակայն այս անգամ ա՛յլ հողերու վրայ: Որպէս թուրան ճանչցուած թրքական այս մեծ հայրենիքին քաղաքական սահմանները պիտի տարածուին մինչեւ հոն ուր կը հասնին թուրքերուն լեզուներն ու մշակոյթները⁽²²⁾:

Այս մէկը բնաւ չսպասուող առիթ⁽²³⁾ մըն էր: Հիւսէին ձահրաւ Եալչըն յողուած մը կը գրէ Համաշխարհային Առաջին Պատերազմին հետ «Ապասուող օր» ըսելով եւ կը յայտնէ թէ պատերազմն եկաւ հրաշքի մը նման ի՛ր իսկ անկումին վստահ եղող թուրք ժողովուրդին եւ անոր բերաւ հաշուեյարդարի պատմական օր մը մինչեւ հիմա իրմէ հաշիւ պահանջել չկարողացած մեր թշնամիներուն հետ⁽²⁴⁾: [Էջ 103] «Մինչեւ հիմա պատմութեան յոռի վայրագութեամբը վրէժ մը» պիտի լուծուէր անոնցմէ⁽²⁵⁾: Մեր բանաստեղծներուն քերթուածները կրկի՛ն արիւն կը բուրեն Զիա Կէօքալփի առաջնորդութեամբ:

Վազէ՛, Բլեմէն թող կրկի՛ն պարզէ կարմիր դրօշակ,
Թող Տանուպի ջուրն արիւն վազցնէ գիշեր ու ցերեկ⁽²⁶⁾:

Բոլոր այս ցնորքներն իրականացնողն է էնվէր փաշան: «Ա՛լ թուրքերը փրկուելու վրայ են» աւետիսը տուողն ինքն է⁽²⁷⁾:

Կարելի է ըսել, թէ կարելի է ոչ քաղաքականօրէն [եւ] ոչ ալ զինուորականօրէն խորագնին քննութեան ենթարկել զինուորական [այն] գործողութիւնները որոնց ձեռնարկուեցաւ թուրանական ցնորքներու պատճառներով: Կովկասի եւ Իրանի մէջ ամէն ձեւով էնվէր փաշայի զինուորական մտածողութեան առընչուող արարքները կարելի է բացատրել լոկ յեղակարծ [եւ] անսպասելի կերպով հրապարակ եկած եւ ցնորքը իրականութեան վերածելիք այս գործով: Սակայն շատ կարճ ժամանակի մը մէջ այս ցնորքը վերջ գտաւ վնասով: Պատերազմի առաջին ամիսներուն իրարայջորդ պարտութիւնները իրենց հետ բերին մեծ անկում մըն ալ, իսկ Սարրզամիշի պարտութիւնը մէկ դարձակէտն է դարաշրջանի մը: «Սարրզամիշի պարտութիւնը ծանր անկումի հասցուց անվեր-

Զանալի ցնորքներ սնուցանող իթթիհատականները... պարտու-
 թիւնը ջուրը ձգեց թուրանական եւ իսլամական ցնորքները»⁽²⁸⁾ :
 Անշո՛ւշտ որ պատասխանատուները կային այս պարտութիւննե-
 րուն : Մենք չէինք պարտուած, [այլ] հանդիպեր դաւաճանութեան :
 Էլիաս կը մէջբերէ նացիներուն առաջին պատերազմի⁽²⁹⁾ մասին
 ըրած սախօսքերը . «Պատերազմը տեղի ունեցաւ սիրելիներու նեն-
 գամիտ խարկանքին [եւ] դաւաղրութեան պատճառներով, անիկա
 տեղի ունեցաւ մեր միջեւ գտնուող դաւաճաններուն մեր կողմող
 միւսները թիկունքէն դաշունահարելուն պատճառով»⁽³⁰⁾ : Նա-
 ցիներէն մէջբերուած այս խօսքերը Թուրքիոյ մէջ ո՛չ թէ լոկ որպէս
 խօսք՝ այլ որպէս յանցապարտութեան խօսք՝ բառացի կերպով օգ-
 տագործուած են Հայկական Զարդին մասին գրուած ուսումնասի-
 րութիւններուն մէջ : Հրեաներն ու համայնավարները չէի՛ն մեզ
 մեր թիկունքէն հարուածողները, այլ՝ հայերը :

Տեւական պարտութիւնը, նսեմացումը եւ արժանապատ-
 ուութեան կորուստէն ետք հրապարակ եկած պատմական այս մեծ
 առիթը յեղակարծ անկացումը եղան պատմական այլ իրականու-
 թեան մը : Թշնամի ուժերը հասեր էին Չանազգալէ եւ [Օսմանեան]
 կայսրութեան վախճանը [էջ 104] ժամանակի խնդիր էր այլեւս :
 Այս մէկն իրեն հետ բերաւ անխուսափելի գիտակցութիւն մըն ալ :
 Կրկին հրապարակ էր գրուեր երկու հարիւր տարիէ ի վեր դիտուող
 շարժանկար մը : Այս պարտութիւններով ապրելու համար հայե-
 րուն պիտի տրուէին մեր ձեռքը գտնուող վերջին հողերն ալ : Ար-
 գէն պատերազմէն առաջ այս ուղղութեամբ մշակուած էր բարենո-
 րոգումի ծրագիր մը, բայց «վտանգը» հեռացուած էր պատերազ-
 մին միջոցով : Հիմա, կրկին, «արեւելեան նահանգներուն մէջ բա-
 րենորոգումի վերջը չերեւցող խնդիրը անգամ մը եւս — թերեւս
 ալ վերջին անգամն ըլլալով — պիտի գար հրապարակը միջազգա-
 յին քաղաքականութեան : Փոփոխութիւն չկար գերակատարներուն
 մէջ . նոյնն էր նաեւ բեմայարդարումը»⁽³¹⁾ : Այս մէկը, [սա-
 կայն], նոր Ռումելիէ մը, նոր Մակեդոնիայէ մը աւելի բան մըն
 էր : Ա՛յ պիտի կորսուէր Անատոլուն ալ : Տրուեր էր մահափճիւրը :

Այսպիսի անյոյս կացութիւններ կը մղեն որ կատարուելիք
 արարքներն ըլլան անգութ [եւ] շշմեցնող⁽³²⁾ : Անկումի մնայուն
 զգացում մը [եւ] թշնամիներու կողմէ կազմակերպուած թակար-
 դում մը կրնան արթնցնել այն համոզումը թէ մի միայն վայրա-
 գութեամբ կարելի է փրկել կորուստը ուժին եւ պատիւին⁽³³⁾ : Ար-
 ժանապատուութեան եւ ինքնագիտակցութեան կորուստին մեծու-
 թիւնը եւ պետութեան անկումի սեմին հասած ըլլալը օսմանցիներ
 ու մօտ ծնունդ տուին խելայեղութեանն ու վայրագութեանը կա-

ցութիւնը փրկելու համար առնուած որոշումներուն: Անկումին իրականանալի կացութեան մը հասնիլն ստեղծեց մեծ երկիւղ մը, որ մերժուեցաւ. այս ալ ծնունդ տուաւ բարբարոսութեանը անկէ ազատուելու համար ձեռնարկուող արարքին: Սխալ չէ ըսել, թէ հայերու բնաջնջումին որոշումն առնուեցաւ հոգեկան այսպիսի կացութեան մը մէջ:

1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՐԴԵՐԸ

Հայկական կոտորածին սկզբնաւորութեան որպէս պաշտօնական թուական կը տրուի 24/25 Ապրիլ 1915-ը: Սակայն այս թրւականն ունի աւելի խորհրդանշական նկարագիր մը: Տարագրութեան եւ սպանդին դէպքերը սկսած են այս թուականէն առաջ: Այսուհանդերձ՝ անհրաժեշտ է ըսել, թէ ձեռքի տակ չկայ փաստաթուղթ մը, որ առընչուի հայերը բնաջնջելու որոշումի մը եւ հրահանգի մը: Գոյութիւն ունեցող փաստաթուղթերը հրատարակուած են տարագրութեան սկսելէն ետք, եւ անոնց մէջ տեղ է տրուած լո՛կ «այլ վայրեր մեկնում եւ բնակութիւն», կամ ալ՝ [էջ 105] «որոշուած եւ ճշգուտ վայրերը փոխադրութիւն եւ բնակութիւն» բացատրութեան: Իրաւ ալ՝ հայկական ջարդերուն գործադրութեան մէջ դեր խաղացած Մասնաւոր կազմակերպութեան քաղաքականութեան առընչուող Պեհաէտտին Շաքիրի «ձեր յայտնած՝ փոխադրուած եւ դուրս հանուած մարդերը ամբողջութեամբ կը բնաջնջուի՞ն թէ ոչ միայն դուրս կը հանուին ու կը զրկուին. յստակ կերպով գիտցուցէք, եղբայրս»⁽³⁴⁾ նման հեռագիրներ կային: Եթէ նոյնիսկ այսպիսի հեռագիրներէն հասկցուի որ բնաջնջումը ծրագրուած արարք մըն է՝ պաշտօնական որոշմնագիր մը չկայ այս փաստաթուղթերուն մէջ⁽³⁵⁾ եւ այն կանոնագրութիւններուն՝ որոնք կ'առընչուին հայերուն: Դժուար է աղերս մը ստեղծել դէպքերուն գործադրութեան համար հրապարակ դրուած փաստաթուղթերուն միջեւ, [եւ ուրեմն՝] անկարելի կը դառնայ դէպքերը վերլուծել պաշտօնական փաստաթուղթերով: Իրականութեան մէջ՝ որպէս երկու անջատ իրականութիւններ առնուելու են կատարուածները⁽³⁶⁾ եւ այն կանոնագրութիւնները որոնք կ'առընչուին հայերուն:

Յենելով դէպքերուն կազմակերպումին առընչուողներուն, ահանատեսներու վկայութիւններուն, հիւպատոսական տեղեկագիրներուն կամ ալ այս շրջաններուն⁽³⁷⁾ մէջ պաշտօնավարող զինուորի, հիւանդապահուհիի [եւ] միսիոնարի նման օտար ահա-

նատեսներու տեղեկագիրներուն՝ կարելի է գրեթէ ամբողջական պատկերացումն ունենալ [կատարուածին]: Իրարմէ անտեղեակ եւ աշխարհան վայրերու մէջ գտնուող այս մարդերուն տեղեկագիրներուն մէջ, հակառակ անոնց հակասական բոլոր տարբերութիւններուն, ուշադրութիւն գրաւողը շարժումին յատուկ ծրագրի մը համաձայն կատարուած ըլլալն է: Կարեւոր կէտ մըն է այս մէկը, որովհետեւ թրքական կողմը տեւորէն կը պնդէ թէ բնաջնջումի ծրագիր մը չէ եղած:

Իրաւ ալ՝ հայկական կոտորածին մասնաւոր յատկանիշ մը տուողը ըստ երեւոյթին անոր անկազմակերպ եւ անծրագիր ըլլալն է: Առաջին ակնարկով հրապարակ կու գայ տեղական կողմնակիցներու օժանդակութեամբ կամ ալ քաղաքական անհակակշռելի խմբաւորումներու յարձակումներով պատահած՝ այլ չուզուած ջարդերուն կազմակերպուածութեան հարցը՝ փոխան կեդրոնէն [մշակուած] բնաջնջումի ծրագրի մը: «Իւրաքանչիւր կարաւանէն ողջ մնացողներուն թիւը կապուած էր անոր ընկերացողներուն»⁽³⁸⁾ մարդկայնութեան եւ բարի տրամադրութեան: Այս ուղղութեամբ կար ոչ մէկ խիստ հրահանգ: Ըստ կարի՝ յստակ չէր բնաջնջումի ծրագիրն ալ: Հիմնականը կարաւաններուն մէջ [գտնուող] անհատներուն թիւը նուազագոյնի իջեցնել էր մեռցնելով, առեւանգելով [էջ 106] եւ անսուղ ձգելով՝ տեղափոխութեան պաշտօնական թեզը արդարացնելու շափ»⁽³⁹⁾:

Մեզի համար խնդիր չէ այս հարցին մշակուած, այսինքն՝ կեդրոնէն ծրագրուած ընդհանուր ջարդ մը ըլլալը կամ չըլլալը: Սօս երկու տարուան տեւողութիւն մը ընդգրկող տարագրութիւններուն ընթացքին անսուղութեամբ, ծարաւի մատնուելով կամ հաւարականօրէն սպաննուելով մահացող հայերուն կեդրոնէն տրուած հրահանգով մը բնաջնջումը հաստատող կան մեծ քանակութեամբ գիրեր՝ ինչպէս որ գայն կը հաստատէ Պեհաէտտին Շաքիրի վերոյիշեալ հեռագիրը⁽⁴⁰⁾: Անծրագիր կերպով բնաջնջելու այս նպատակը համոզկեր դարձնելու համար բաւարար է րացակայութիւնը մէկ հատիկ իսկ կանոնագրութեան որ միտէր առաջնորդել տեղափոխութիւնը ժողովուրդի մը, [եւ այս մէկը՝] ո՛չ տարագրութեան սկիզբը, ո՛չ ճամբաներուն վրայ եւ ո՛չ ալ [տարագրութեան] յայտարարուած սկզբնական վայրերուն մէջ: Միակ խնդիրը՝ կեդրոնէն մշակուած այսպիսի արարք մը այսքան չփոթ վիճակի մը մէջ ձգելու կարելիութիւնն է, եւ որուն պիտի անդրադառնանք յետագային:

Նախ փորձենք, ըստ շարքի, մանրամասնօրէն պատմել ընթացքը պատահածներուն⁽⁴¹⁾: Դաշնակ Կուսակցութիւնը որ լաւ

յարարերութիւններու մէջ կը գտնուէր Իթթիհատ վէ Թերագզրի հետ՝ համագումար մը ունեցաւ Կարինի մէջ 2-14 Օգոստոսին: Իթթիհատ վէ Թերագզրն համագումարին զրկեց պատուիրակութիւն մը [Պեհաէտին] Շաքիրի նախագահութեամբ, որուն անունը սերտօրէն կապուած [կը մնայ] հայկական ջարդերուն, եւ հայերուն առաջարկեց գործակցիլ Ռուսիոյ հետ կայանալիք պատերազմի մը ատեն: Եթէ Դաշնակ Կուսակցութիւնը բմբոստութեան մղէր ռուսահայերը՝ [հայերուն] արտօնութիւն պիտի տրուէր ինքնավար նոր վարչութիւն մը [հաստատել] գրաւեալ նոր հողերն ալ ընդգրկող [իրենց շրջաններուն մէջ]: Հայ ղեկավարները մերժեցին այս առաջարկները եւ որդեգրեցին շէզոք քաղաքականութիւն մը: Ըսին [թէ] եթէ պատերազմ ծագէր՝ օսմանեան քաղաքացի⁽⁴²⁾ եզող հայերը պիտի հաւատարիմ մնային պետութեան: Միւս կողմէ՝ նոյնանման առաջարկներ կատարուեցան ռուսերուն կողմէն ալ ռուսիարնակ հայերուն: Անոնք մօտեցան այս առաջարկին եւ կազմեցին հայկական կամաւորական խումբեր, որոնք կ'ընդգրկուէին արտասահմանէն եկած հայերն ալ: Պատերազմի սկզբնաւորութեան այս միաւորներուն թիւը հազարական հոգիէ բաղկացած չորս խումբ էր — նուազ կամ [էջ 107] զանցառելի ըլլալը շատ ալ կարեւոր չէ, որովհետեւ մինչեւ վերջը օսմանեան կառավարութիւնը այս իրականութիւնը պիտի օգտագործէ քարոզչութեան որպէս տուեալ:

Թէ հայերն անվստահելի եւ կասկածելի մարդերու հաւաքականութիւն մըն են՝ սկսած է յայտարարուիլ պատերազմէն առաջ: Տակաւին 6 Սեպտեմբեր 1914-ին օսմանեան կառավարութիւնը «ծածկագիր հրահանգ մը զրկելով հայերուն բազմամարդ եզած նահանգները [տեղական իշխանութիւններուն] հրամայեց տեւական հսկողութեան տակ պահել շարժումները հայ քաղաքական կուսակցութիւններու պետերուն եւ վարչականներուն»⁽⁴³⁾: Երբ պատերազմը սկսաւ՝ բնական էր որ [գինուորացուներ] փախուստ տային բանակին ամենապարփակ գինուորականութենէն: Այս մէկը կը տեսնուի հայերուն մօտ ալ: Օսմանեան-թրքական բնաբաններուն մէջ առաջին գիծի վրայ գտնուելիք անհրաժեշտութեան մը հանգոյն տեսօրէն հրապարակ կը դրուի այն թէ փախուստ տալով գինուորութենէն հայերը հրոսախումբեր են կազմած լեռներուն մէջ ու կը վտանգեն ապահովութիւնը, մինչդեռ Համալիարհային Առաջին Պատերազմին մեծապէս գործադրուող արարք մըն է փախուստը գինուորութենէն, եւ Լիման Փոն Զանտերս

կ'ըսէ իր յուշերուն մէջ, [Թէ] «Անատոլուի լեռներուն [եւ] գիւղերուն մէջ կը շրջէին 300,000 գինուորական փախստականներ: Ասոնք կը պատկանին գինեալ բանակին...»⁽⁴⁴⁾:

Անոնց մէջ գտնուող կարգ մը ծանօթ հայ ղեկավարներ մանաւանդ անցնելով սահմանը միացան Ռուսիոյ կամաւորական միաւորներուն: Նոյն ատեն հայ հրոսակներ ի յայտ կու գան Անատոլուի գանազան շրջաններուն մէջ: [Տեղի կ'ունենան] անվերջ բախումներ անոնց եւ կառավարական ուժերուն կամ քրտական ցեղախումբերուն միջեւ: Դաշնակ Կուսակցութեան գլխաւոր ղեկավարներէն եւ անկախ Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետերէն Յովհաննէս Քաջազնունի կ'ըսէ, թէ այս կազմակերպութիւնները գոյութեան կոչուեցան ըստ Կարինի [որոշումներուն]: «1914-ի աշնան կազմուեցան հայ կամաւորական խումբեր եւ կոուեցան թուրքերու դէմ: Չէր կրնար տեղի ունենալ այս բանին հակառակը, որովհետեւ վերջին քառորդ դարէ ի վեր հայ ժողովուրդը սնած էր յայտնի եւ անխուսափելի հոգեբանութեամբ մը: Կարելոր էր հոգեկան այս իրողութեան զրսելորումը եւ օգտակար ալ եղած»⁽⁴⁵⁾: Թուրք-օսմանեան պաշտօնական գիրերն այս արարքները կը հաշուեն պատճառներուն մէջ հայկական ջարդերուն:

Պատերազմին սկսելովն սկզբնական յարձակումները կ'աւելնան հայերուն դէմ: [էջ 108] Յարձակումի եւ աւարառութեան կ'ենթարկուին գիւղերը մանաւանդ Արեւելեան Անատոլուի նահանգներուն մէջ պատերազմական տուրք հաւաքելու [եւ] գինուորական փախստականները հետապնդելու պատրուակով, եւ կը կատարուին տեղական սպանութիւններ: Հիմնական դերը կը խաղան միաւորները Մասնաւոր Կազմակերպութեան, որ Կարինը ըրեր էր իր կեդրոնը, եւ քիւրտերէ կազմուած Համիտիէ Գունդերը: Յետագային այս խմբաւորումները պիտի ըլլան հայերը խմբովին սպաննողները: Ասոնցմէ Մասնաւոր Կազմակերպութեան պատկանողները մեծ մասով կազմուած են բանտերու դատապարտուածներէն [եւ] Պալքաններէն ու կովկասեան ջարդերէն փախուստ տալով ազատուած մահմետական քոչուոր կամաւորներէն: Կը պնդուի, թէ Մասնաւոր Կազմակերպութեան միաւորները կազմակերպուած են մասնաւոր կերպով ջարդի համար: «Չարաբաստիկ տարագրութեան» յաջողութիւնն ապահովելէ աւելի՝ Մասնաւոր Կազմակերպութեան հրոսակներուն պարտականութիւններէն կարելորագոյնը կը հանդիսանար զործնապէս մասնակցութիւնը հայկական ջարդերուն: Առ այս՝ պատրաստութեան մասնաւոր վարժութիւններ տրուեցան անոնց պատերազմական նախարարութեան

կողմէ»⁽⁴⁶⁾։ Պատերազմի սկզբնական տարիներուն այս միաւորներուն գիւղերու վրայ կատարած յարձակումները, աւարառութիւնները եւ սպանութիւնները կը հասնին այնպիսի համեմատութիւններու, որ կարգ մը շրջաններու կուսակալները զանգատ կը ներկայացնեն Պոլիս եւ կը պահանջեն վերջ տալ այսպիսի արարքներու։

Սարըզամիշի 1914-ի նոյեմբերեան պարտութիւնը կը կազմէ ճիշդ շրջանի մը սկիզբը՝ հայերուն վրան [կատարուող] առաջին յարձակումներուն մէջ։ 1915-ի Փետրուարին տրուած հրահանգով մը նախ կը զինաթափուին բոլոր հայ զինուորները [օսմանեան] բանակներուն, եւ անոնցմէ կը կազմուին բանուորական վաշտեր։ Ճամբաներու շինութեան [մէջ աշխատող] եւ ապրանք փոխադրող այս միաւորները պիտի բնաջնջուին կա՛մ ձգուելով ցուրտին՝ կա՛մ ալ սպաննուելով։ Երկրորդ մեծ ալիքը կու գայ Վանի դէպքերէն ետք։ Ըստ պաշտօնական քեզին՝ 1915-ի Ապրիլին բմբոստութիւն մը տեղի կ'ունենայ Վանի մէջ։ Քաղաքին հայ բնակչութիւնը կը դիմանայ մէկ ամիս՝ մինչեւ որ կ'ազատագրուի ուսական միաւորներուն կողմէ։ Անհրաժեշտ չափով ցոյց տրուելով այս դէպքերը՝ 24/25 Ապրիլին Պոլիսէն սկիզբ կ'առնեն համատարած ձերբակալութիւններ։ Բազմաթիւ նահանգներու մէջ այս ձերբակալութիւններն սկսած են 19 Ապրիլին։ Անոնք կանոնաւոր կերպով կը շարունակուին մինչեւ Մայիս 19։ Կարգ մը շրջաններու մէջ [էջ 109] ձերբակալուողները կը սպաննուին բաց վայրերու մէջ⁽⁴⁷⁾՝ վախ աղղելու համար [ժողովուրդին]։ Այս բոլորը մտածուած արարքներ են կատարուելիք քսոտներուն դէմ կարելի շարժումի մը առաջին առնելու համար։ Կրկին այս շրջանին է, որ բոլոր հայերը դուրս կը դրուին [իրենց] պետական պաշտօններէն եւ հայերուն համար երթեւեկի արգելք կը հաստատուի երկրէն ներս։

Հայ ժողովուրդին զինաթափումի խնդիրն ալ սկսած է պատերազմի սկսելէն առաջ։ Այս հարցին մէջ շատ գործօն էին միաւորները Մասնաւոր Կազմակերպութեան։ Ինչպէս ըսինք վերը՝ զէնքի փնտտութիւն, պատերազմական տուրքի հաւաքումին, փախըստական զինուորներուն որոնումին նման պատճառներով արդէն բազմաթիւ տեղեր հրապարակ կու գան կանոնաւոր կերպով [կատարուող] կողոպուտի, յարձակումի եւ սպանութեան դէպքեր, որոնք այլեւս անօրեայ պատահարներ կը նկատուին։ Բնաջնջումի կանոնաւոր գործողութեան սկսուելէն առաջ ձեռք առնուած ըսկզբնական միջոցառումներ էին ժողովուրդին եւ հայերուն զինաթափումը, [եւ] ձերբակալութիւնը եւ սպանութիւնը տղամարդոց, որոնք ի վիճակի էին ղեկավարութիւն կատարելու։ Ձեռք առ-

նուած միջոցառումները չէին ուղղուած անհատ հայերու դէմ: Բազմաթիւ աղբիւրներէ գիտենք, որ կարգ մը շրջաններու մէջ բնաջնջուած են պետական կարգ մը պաշտօնեաներ ալ⁽⁴⁸⁾, որոնք կ'ենթադրուի թէ կրնային բնդդիմանալ գաղթի որոշումին⁽⁴⁹⁾:

Տարագրութիւնը կատարելու պաշտօնական որոշումը կ'առնուի 27 Մայիս 1915-ին եւ պաշտօնաթերթին⁽⁵⁰⁾ մէջ կը հրատարակուի 1 Յունիսին: Սակայն գաղթերն արդէն իսկ սկսած են Մարտին: Օրինակ՝ Չուքուր Օվայի⁽⁵¹⁾ շրջանէն, Մարաշի եւ Ատանայի սանճագներէն 15 Մարտին սկսելով [եւ] շաբաթներ տեւելիք ձեւով մը՝ զանազան պատճառներով հայերը քուեցան դէպի խորերը Անատոլուի — Գոնիայի դաշտը⁽⁵²⁾ — եւ Իրաքի անպատնեղէն՝ Տէր էլ-Չօր: Գաղթի եւ ջարդի մեծագոյն գործողութիւնները կը կատարուին Արեւելեան Նահանգներուն մէջ, որոնք Հայաստան պիտի դառնային օսմանցիներուն պատերազմը կորսրնցնելու պարագային: Այս վայրերուն մէջ Մայիսի կէսերուն սկսած գաղթերն իրենց աւարտին կը հասնին Օգոստոսի սկիզբը:

Ըստ կարեւրութեան՝ շրջանէ շրջան կը տարբերի կազմակերպումը գաղթին եւ ջարդին: Կարգ մը վայրերու մէջ գաղթէն երկու ժամ, [եւ] այլ տեղեր՝ տասնհինգ օր առաջ լուր է տրուած [գաղթելու համար]: Նախապէս լուր տրուած վայրերուն մէջ գաղթներն ընդհանրապէս կատարուած են սպասուած թուականէն առաջ: Ինչպէս որ գաղթի ենթակայ ըլլալիքներու պատրաստութեան [ատեն, էջ 110] իրենց հետ գոյք վերցնելու համար արտօնութիւն տրուած շրջաններ եղած են՝ նոյնպէս ալ կան շրջաններ ուր հայերուն արգիլուած է գոյքի վաճառքը. նոյնիսկ այն մահմետականները որոնք գտնուած են այսպիսի յարաբերութեան մէջ հայերուն հետ՝ ենթարկուած են զանազան պատիժներու, ներառեալ մահուան դատապարտութիւնը: Այս մէկը բաւական լայն կերպով կը հասկնանք Երրորդ Բանակի հրամանատարութեան հրատարակած մէկ հրահանգին երրորդ յօդուածէն: «Հայ մը պաշտպանող մահմետական մը իր տունին առջեւ պիտի դատապարտուի մահուան եւ իր տունը պիտի տրուի կրակի, եւ եթէ պաշտօնեայ է անիկա՝ պիտի արձակուի [իր պաշտօնէն] եւ յանձնուի պատերազմական ատեան, եւ եթէ անոր⁽⁵³⁾ պաշտպան կանգնողները զինուորական են՝ պիտի զրկուին իրենց զինուորականութենէն եւ յանձնուին պատերազմական ատեան»⁽⁵⁴⁾: Շատ մը պարագաներու՝ [հայերուն] իրենց հետ արժէքաւոր գոյք ու ապրանք վերցնելն ալ առիթ է ընծայած անմիջապէս սպաննելու զանոնք: Ինչպէս որ, հակառակ արգելքներուն, տարագրեալ խումբերուն ուտելիք տուողներ գտնուած են ճամբաներուն վրան՝ եղած են նաեւ զանոնք բոլորո-

վին մահուան յանձնողներ: Ընդհանրապէս, որպէս սկզբունք, շրջանի մը ժողովուրդը նախ մեծ մասով մաքրուած է տղամարդոցմէ⁽⁵⁵⁾: Հոն ուր այս մէկը չէ կատարուած՝ կա՛մ գաղթին անմիջապէս սկիզբը՝ կամ ալ ճամբուն վրայ [կարաւաններուն ընկերացողներուն] առաջին գործն է եղած տղամարդերը բաժնել կիներէն եւ մանուկներէն, [եւ որոնք] կա՛մ գնդակահարուած են՝ կամ ալ բնաջնջուած՝ զանազան միջոցներով: Մասնաւոր կազմակերպութեան միաւորներուն եւ քիւրտ հրոսակներուն քովիկն ի վեր՝ ջարդերուն մասնակցած են զինուորական միաւորներ (մասնաւորապէս ոստիկան-զինուորներ) եւ քաղաքային ժողովուրդը: Անոնցմէ վերջին երկուքին գործելակերպը շրջանէ շրջան եղած է փոփոխական: Կարգ մը տեղեր քաղաքային ժողովուրդէն եղած են հայերը պաշտպանողներ եւ պահողներ, իսկ կարգ մը [այլ] վայրերու մէջ ալ՝ ոստիկան-զինուորներ փորձած են կարաւանները պաշտպանել յարձակումներէն քաղաքային ժողովուրդին:

Արեւելեան շրջաններու Մայիսէն Յուլիս ամիսներու ընթացքին աւարտող⁽⁵⁶⁾ գաղթականութեան յաջորդեցին գաղթերը Արեւմտեան Անատոլուէն եւ Թրակիայէն: [Ներկայացուած] այս տախտակէն ի յայտ կու գայ, որ նպատակին ամբողջական իրագործումը կապուած է մնացեւ տեղական ղեկավարներու գործելակերպին: Հալէպն էր առաջին հանգրուանը գաղթականներուն: Հոս ողջամբ հասնողները կը գետեղուէին կեդրոնացման վայրերը՝ առաքուելու համար իրենց նոր տեղերը: [էջ 111] Լո՛կ մահուան հաւաքավայր մը եղող այս վայրերէն ողջ դուրս գալը հրաշք մըն էր արդէն: Իսկ անոնք⁽⁵⁷⁾ կ'առաքուէին անջատ երկու ուղղութեամբ — Սուրիոյ հիւսիսը եւ արեւելքը՝ Միջագետք, այսինքրն՝ արարական անապատները...: Այս տեղերը ղրկուիլ՝ [կը նշանակէր] բռնել մահուան ճամբան: Նոր հաստատուող հաւաքավայրերը մահուան կայաններէն տարբեր բաներ չէին: Ինչպէս կը տեսնուի այս տախտակէն ալ՝ հայերը չեն ջարդուած միայն՝ [այլ] մեռցուած են [նաեւ] անսուազութեամբ, պապակով եւ հիւանդութեամբ: Արարական անապատներուն մէջ մահուան կայանները շրջող ականատես վկայ մը մարդերու առանց ցաւի մեռցուելէն⁽⁵⁸⁾ աւելի՛ անօթութեամբ եւ ծարաւով անոնց հետզհետէ մահուան առաքումը կը ներկայացնէ որպէս մէկ գիւտը քաղաքակրթութեան, եւ կը յարէ թէ «ջարդ մը նուազ օրինական է անօթութեամբ [տեղի ունեցած] մահէն: (Այսպէսով) փրկուեցաւ քաղաքակրթութիւնը»⁽⁵⁹⁾: Կարելի է ըսել, թէ 1916 տարուան վերջերուն աւարտած է գաղթի բոլոր գործողութիւնը:

Ճշգրիտ կերպով չի գիտցուի, թէ որքա՞ն մարդ մեռցուեցաւ զաղթի ամբողջ տեւողութեան: Յայտնի է, [սակայն], որ, ըստ Հայ Եկեղեցիին [եւ] թրքական աղբիւրներուն 1,3 միլիոն բնակչութենէն, որ գոյութիւն ունէր պատերազմէն առաջ օսմանեան հողերուն վրայ՝ կը մնայ մարդկային շատ փոքր հաւաքականութիւն մը: Ազատուածներուն քանակին⁽⁶⁰⁾ համար տրուող թիւերն ալ այլազան են: Աղբիւրներ կան, որոնք կը խօսին մօտ 600,000-ի մասին: Կ'ենթադրուի, թէ անոնցմէ 150, [000] - 200,000-ը ողջ մնացողներ են աքսորէն: 200,000-ը աքսորէ զերծ մնացողներ են: Մօտ 250,000-ն ալ անոնք են որոնք կարողացած են փախուստ տալ Ռուսիա, իսկ անկարելի է հաշուել թիւը թուրք եւ քիւրտ ընտանիքներու բաշխուած կամ առեւանգուած կիներու եւ մանուկներու: Այս մէկուն ալ կը տրուի 200,000-ի թիւ մը, որ պարզօրէն ենթադրութիւն մըն է: Ի վերջոյ նկատի առնելով թիւը ողջ մնացածներուն՝ կատարուած են կարգ մը ենթադրութիւններ մեռածներու մասին ալ: Իթիբհատ վէ թերրագգըի ղեկավարներուն 1919-ի դատավարութեան ատեն մահացածներուն թիւը տրուած է մօտաւորապէս 800,000, մինչ Լեփսիոս կը խօսի մօտ մէկ միլիոն մահացածի մասին: Հարցին առնչուող միւս թիւերը կը տարբերին 600,000-1.5 միլիոնի միջեւ: [էջ 112] Հրապարակի վրայ է արդիւնքը: 31 Օգոստոս 1916-ին Թալէաթ փաշա կ'ըսէր գերման մեծ ղեսպան Ֆիւրսթ Հոհենլոհէ-Լանկենպուրկին⁽⁶¹⁾, թէ «ա՛լ գոյութիւն չունի Հայկական Հարցը»⁽⁶²⁾ [էջ 112]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. [Քառակուսի փակագիծերու մէջ կը տրուին մեր կողմէ տրուած ծանօթագրութիւնները, մնացեալները կը պատկանին Թամէր Ազշամին, որոնք կը սկսին թիւ 193-էն. սակայն թարգմանութեան մէջ կը տրուին որպէս շարունակութիւնը ծանօթ. թիւ 1-ին եւ յաջորդաբար: Իսկ թարգմանութեան մէջ քառակուսի փակագիծերու մէջ կը տրուին Ազշամի հատորին էջաթիւերը եւ յստակացումի համար մեր կողմէն կատարուած յաւելումները: Թարգմանուած հատուածը կու գայ Taner Akçam, **Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu**, İstanbul, 1992, հատորին 95-112 էջերէն]:
2. [Կ'ակնարկուի Օսմանեան պետութեան]:
3. [Ազշամ կու տայ պիսիւմէք բառը, որ «մեծնալ»ն է. մենք նախընտրեցինք զայն թարգմանել «բարձրանալ»]:

4. Ara M. Sinanian, «Ermeni jenosidinin 5 evresi», **Kurdistan Press**, N° 16/8, Stockholm, Nissan, 1987. Սինանեան երեք անգամ մասերու բաժնելով 1917-էն ետքինը՝ կ'ուսումնասիրէ զանոնք: Այս շրջանները մէկ առ մէկ շիջուեցան հոս՝ անոնց խնդրոյ առարկայ հարցէն դուրս գտնուելուն համար:
5. 1878-էն ետք բազմացող հայկական ջարդերուն մասին անլի մանրամասն ծանօթութեան համար տես՝ **Taner Akçam, Siyasi Kültürümüzde Zulüm ve Iskence**, İstanbul, 1992.
6. Թիւերը կը մէջբերէ Yves Ternon, **Tabu Arménien**, Frankfurt, 1988, p. 98.
7. Այս աղբնչութեամբ մտադի մեր հաստուածին մէջ կը տրուին ստորագումներուն կարգ մը նմուշները, որոնք կ'օգտագործուին մեր օրերուն իսկ:
8. Ali Vehbi Bey, **Abdul-Hamid**, İstanbul, [t.y.], s. 12, 31, in Enver Ziya Karal, **Osmanlı Tarihi**, cilt VIII, Ankara, 1962, s. 484.
9. Tahsin Pasa, **Abdul Hamid ve Yıldız Hatıraları**, İstanbul, 1931, s. 133-134.
10. Joan Haslip, **The Sultan : The Life of Abdul Hamid**, London, 1960, p. 220.
11. Նոյն:
12. Wilhelm von Kampen, **Studien Zur Deutschen Türkeipolitik in dern Zeit Wilhelm II**, Kiel, 1969, s. 122.
13. [Ազգամ ունի փոկրոմ բառը, զոր թարգմանեցինք՝ «ժողովրդասպանութիւն»]:
14. [Ազգամ կը գործածէ **զըմեթլեշթիթմէք**՝ «արժևորել» բառը. մենք թարգմանեցինք «իմաստ մը տալ»]:
15. [Հոս Թանէր Ազգամի աղբիւր ծառայող հեղինակը կ'ակնարկէ քրտական Համիտի գունդերուն]:
16. Orhan Kologlu, **Abdulhamit Gerçegi**, İstanbul, 1987, s. 227, 432.
17. Haslip, p. 230.
18. Yves Ternon, **Bericht über den Völkemord an den Armenien in Osmanischen Reich 1915/16**. Tessa Hoffmann [Editör], **Das Verbrechen des Schweigen : Die Verhandlung des Türkischen Völkermords an der Armenien vor dem Ständigen Tribunal der Volker (Paris, 1984)**, Göttingen, 1985, s. 53.
19. [Ազգամ ունի **զանասթ**՝ «համոզում» բառը. մենք թարգմանեցինք՝ «կարծիք»]:
20. Norbert Elias, **Studien über der Deutschen**, Frankfurt/M. 1990, s. 427.
21. Նոյն՝ էջ 448 եւ 484:
22. Tarik Zafer Tunaya, **Türkiyede Siyasi Partiler**, cilt III, İstanbul, 1952, s. 320.
23. [Ազգամ ունի **կիսէշ**՝ «արեւ» բառը. մենք թարգմանեցինք՝ «առիթ»]:
24. Կը մէջբերէ Gothard Jasche, **Der Turanismus der Jungtürken, zur Osmanischer Aussenpolitik im Veltkriege**, Leipzig, 1941, s. 3.
25. 14 Նոյեմբեր 1914 թուակիր **Թանին** թերթէն կը մէջբերէ Şevket Süreyya Aydemir, **Makedonya'dan Ortaasya'ya Enver Pasa, 1918-1922**, cilt III, İstanbul, 1978, s. 19.
26. Celal Bayar, **Bende Yazdim**, cilt 4, İstanbul, 1967, s. 1082.
27. Չիւս Կեօրալփի Էնվէր փաշայի մասին գրած բանաստեղծական մէկ հատուածն է, [որուն համար] տես՝ Tunaya, s. 321:
28. Նոյն, էջ 512:
29. [Խօսքը կը վերաբերի Համաշխարհային Առաջին Պատերազմին]:
30. Elias, s. 476.
31. Tunaya, s. 474.
32. [Ազգամ կը գործածէ **սփեքթաքիլէր** բառը, որ կը նշանակէ «աչքառու, գրաւիչ, հոյակապ, երեւելի». մենք թարգմանեցինք «շշմեցնող»]:
33. Elias, s. 465.

34. Պատմական Դատավարություն, 9 Մարտ 335 [1919] թուականին Նորին Վեմնություն Քաղաքին բարձրագույն հրամանով առնուած որոշումի մը վրայ կազմակերպուած **Divan-i Harp Orfi Muhakemesi**, birinci cilt, Istanbul, 1919: 1919-ին Պոլսոյ մէջ հայկական շարդի հարցը պարզելու նպատակով հաստատուած Պատերազմական Ատեանի դատավարութեան ընթացքին թրքերէնի վերածուած փաստաթուղթէն՝ դատախազին ընթերցած ամբաստանագիրէն:
35. Յայտնի է, թէ փնացած են իթիհատական բազմաթիւ փաստաթուղթեր: Կ'ըսուի, թէ [սպանդի] հարցին առնչուող փաստաթուղթերը կա՛մ փնացուած են կամ ալ՝ որոշումներն առնուած են բերանացի կերպով:
36. [Ազգամ ունի **եաշանազար**՝ «սպրուածներ» բառը. մենք թարգմանեցինք «կատարածները»]:
37. [Ազգամ կ'ակնարկէ հայերով բնակուած շրջաններուն. իսկ Օսմանեան Կայսրութեան մէջ հայեր կային քիչ մը ամէն կողմ]:
38. [Ընել կ'ուզուի՝ կարասանին ընկերացող այսպէս կոչուած ոստիկան-զինուորներուն]:
39. Yves Ternon, **Tabu Arménien**, Frankfurt, 1988, p. 189.
40. Այս ուղղութեամբ կարելի է մեծ փաստ գտնել մանաւանդ յուշագրութիւններու մէջ: 1919-ին իթիհատականներու հարցաքննութիւններուն միջոցին ալ տեղ տրուած էր այս հարցին առնչուող փաստաթուղթերուն՝ հակառակ ոմանց ընդդիմութեան: Այս աղբիւրներէն փունջ մը կը ներկայացնենք յաելուածներու բաժինին մէջ:
41. Պատուի ընթացքին ղէպերուն ընթացքը պիտի շարուի առանձին փաստաթուղթերով: Հարցը մանրամասն կերպով քննող կան զանազան լեզուներով եւ տեսակաւոր սկզբնաղբիւրներ: Ջարդերուն առնչուող բնագիր՝ առկայ սկզբնաղբիւրներու, արխիւային գրութիւններու եւ յուշագրութիւններու մէկ ցանկին համար տես Tessa Hoffmann, [ed.] *Das Verbrechen des Schweigens : Die Verbandung des türkischen Völkermords an den Armenien vor dem Ständigen Tribunal der Völker* (Paris, 1984), Göttingen, 1985: Հոս տրուած է ընդարձակ մէկ ցանկը անգլիական, ֆրանսական [եւ] գերմանական աղբիւրներուն [եւ] արխիւային թղթածրարներուն հետ անոնց համարները նաեւ:
42. [Ազգամ ունի **վարանտաշ**՝ «հայրենակից» բառը. մենք թարգմանեցինք «քաղաքացի»]:
43. Kâmurân Gürün, **Ermeni Dosyası**, Ankara, 1984, s. 275.
44. Şevket Süreyya Aydemir, **Makedonya'dan Ortaasya'ya Enver Paşa**, üçüncü cilt, 1914-1922, Istanbul, 1972, s. 348.
45. Kâmurân Gürün, s. 255: [Քիսմուրան Կիրին Քաջագնունիի հատուածը կու տայ խեղաթիւրուած թարգմանութեամբ մը: Ըստ Քաջագնունիի՝ «1914 թուականի աշնան հայ կամաւորական խմբերը կազմուեցին եւ կոտեցին թուրքերի դէմ, որովհետեւ **չէին կարող չը կազմուել ու չը կոտել**. սա բնական ու անխուսափելի հետեւանք էր մի հոգեխառնութեան, որով սնուել էր հայ ժողովուրդը առ նուազը մի քառորդ դար, մի ամբողջ սերունդ, այդ հոգեքանութիւնը պէտք էր գտնել իր արտայայտութիւնը եւ գտաւ»: Տես՝ Յովհ. Քաջագնունի, **Լ. Յ. Գաշնակցութիւնը Անկիթ Զունի Այլես**, Վիեննա, 1923, էջ 8]:
46. Ahmet Refik, **İki Komite İki Kital**, Istanbul, 1919-էն կը մէջբերէ Mete Tuçay, **Cihat ve Tehcir**, 1915-[19]16, Istanbul, 1991, s. 8: Անտիպ:
47. [Ընել կ'ուզուի՝ հպատակներու]:
48. [Ազգամ կ'ակնարկէ պետական թուրք պաշտօնեաներու]:
49. Հետեւեալներն են մեղուած պետական ղեկավարներու առնչուող տեղեկութիւններուն գտնուած տեղերէն ոմանք: Abidin Nesimi, **Yılların İçinden**, Istanbul, [t.y.]

s. 39-40; **Der Prozess Talat Pascha**, stenographische Bericht, Berlin, 1921, s. 57-58; Dr. Johannes Lepsius, **Der Todesgang des Armenischen Volkes**, Potsdam, 1919, s. 76:

50. [Օսմանեան Կայսրութեան պաշտօնաթերթն էր **Քազվիմ-ի Վեզայիմ**]:
51. [Այսինքն՝ Ատանայի նահանգին հարաւային շրջանէն]:
52. [Իրականութեան մէջ՝ անսպառը]:
53. [Կ'ակնարկուի պաշտպանող հայուն]:
54. **Tarihi Muhakeme**, [Istanbul, 1919], s. 14: Թրքերէնի վերածուած փաստաթուղթ:
55. [Ազգամ ըսել կ'ուզէ նախ սպաննուած են տունալ շրջանի մը տղամարդերը]:
56. [Ազգամ կու տայ **թամսիաշան**՝ «ամբողջացող» բառը, մենք թարգմանեցինք «աւարտող»]:
57. [Այսինքն՝ հայերը]:
58. [Ազգամ կ'ակնարկէ զէնքով սպանութեան]:
59. Dr. Johannes Lepsius, **Deutschland und Armenien**, 1914-1918, Sammlung Diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919, s. 486.
60. [Ազգամ կու տայ **սալը**՝ «թիս» բառը, մենք թարգմանեցինք «քանակ»]:
61. [Թուրք դեսպանին անունն էր Իշխան Էրնաթ Վիլիմ Հոհենլոխե-Լանկեպուրկ, եւ որպէս այդպիսին ծառայեց 20 Յուլիտն 2 Հոկտեմբեր: 1915-էն ետք դեսպան Հանց Ֆրայնէր ֆոն Վանկենհայմ արձակուրդի էր մեկնած հիւանդութեան պատճառով]:
62. Lepsius, **Deutschland und Armenien**, s. XXVI.

Թ. Ա.

TURKISH NATIONAL IDENTITY
AND
THE ARMENIAN QUESTION

(SUMMARY)

TANER AKÇAM

The article produced here in Armenian translation is a section from Taner Akçam's Turkish book *Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu* [Turkish National Identity and the Armenian Question], Istanbul, 1992. Making an abundant use of both Turkish and foreign sources, moreover having an access to Turkish materials and publications which have usually remained out of the reach of Western and Armenian historians and specialists of the Turco-Armenian relations, the author tries, for the first time among any Turkish historian, to approach to the thorny question of the Armenian massacres perpetrated by the Turkish authorities, the Turkish population in certain regions of the Ottoman Empire, and the Kurdish and Chechnian tribes in general. To approach to certain facts and to the gist of the truth, Akçam analyzes the reasons and causes which helped prepare the way to the Armenina Massacres of 1915-1916, the psychological make-up of both the Young-Turk organizations and party, the political and military conditions which produced the necessary atmosphere, the organization of the massacres themselves and their procedure, and the number of the losses Armenians bore due to these massacres.

To make clear certain aspects and faces of the problems dealt by Akçam, some additional points are introduced both to the text and annotations and are taken into square brackets to differentiate them from the original notes and sources the author makes use of.